ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.17. Հյուսիսային Եվրոպա: Աշխարհագրական դիրքը, բնական պայմաններն ու ռեսուրսները, բնակչությունը



Նկ. x. Ֆրիտյոֆ Նանսեն

Հայ ժողովրդի մեծ բարեկամը՝ Ֆրիտյոֆ Նանսենը, 2-րդ աշխարհամարտից հետո նվիրվեց կարիքի ու դժբախտության մեջ հայտնված մարդկանց օգնելու գործին (այդ թվում՝ հայ գաղթականներին): Ֆրիտյոֆ Նանսենը մոտիկից ծանոթացել է հայ ժողովրդի եղերական պատմությանը: Բազմախորհուրդ են նրա խոսքերը. «Ինձ դժվար է հավատալ, որ որևէ մեկը կարող է ծանոթանալ այդ նշանավոր ժողովրդի պատմությանը առանց խորապես ցնցվելու նրա մեծ ողբերգությունից»: Նա վճռականորեն դատապարտել է Հայոց ցեղասպանությունը և շեշտել, որ «թուրքական գազանություններն իրենց չափերով ու նողկալի դաժանությամբ գերազանցում են մարդկության հայտնի բոլոր գազանությունները»: Ֆրիտյոֆ Նանսենը 1926 թ.մասնակցել է նաև Շիրակի ջրանցքի բացմանը:

1911թ. դեկտեմբերի 14-ին Ռուալ Ամունդսենը նվաճեց Հարավային բևեռը, Թուր Հեյերդալը պապիրուսե նավակով կատարեց նավարկություններ: Հայտնի , ճանապարհորդներ և ծովագնացներ էին Ֆ.Դրեյկը, Հ. Հուդզոնը, Ու. Բաֆինը, Ջ. Կուկը, Դ. Լիվինգստոնը: Համընդհանուր ճանաչում ունեն կոմպոզիտոր Էդվարդ Գրիգի ստեղծագործությունները:

Դանիացի ֆիզիկոս, աստղագետ Օ. Ռյոմերը առաջինը չափեց լույսի արագությունը, քիմիկոս Նիլս Բորը տվեց ատոմի կառուցվածքի տեսությունը, քիմիկոս Յո. Թոմսոնը ջերմաքիմիայի հիմնադիրն է, բուսաբան և գենետիկ Վ. Յոհանսենը մտցրեց «գեն», «գենոտիպ» և «ֆենոտիպ» հասկացությունները, Հ. Դամը հայտնաբերեց «Կ» վիտամինը: Երեխաների սիրված գրողներից է Հանս Անդերսենն իր բազմաթիվ հեքիաթներով: Համաշխարհային գրականության մեջ Իսլանդիայի ամենակարևոր ավան-

դը սագաներն են՝ հին իսլանդական արձակ ասքերը: Հայ-էստոնական գրական առնչությունները սկզբնավորվել են XIX դարի 30-ական թթ. Դորպատում (այժմ Տարտու), որի համալսարանում են սովորել հայ մշակույթի գործիչներ Խ. Աբովյանը, Ռ. Պատկանյանը, Գ. Դոդոխյանը և ուրիշներ: Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆ. Պարթոտը Խ. Աբովյանի հետ 1929 թ. սեպտեմբերի 27-ին բարձրացավ բիբլիական Արարատ լեռը:

Համաշխարհային ճանաչում ունեն անգլիացի գիտնականներ Ի. Նյուտոնը, Ջ. Ջոուլը, նորզելանդական ծագմամբ բրիտանացի ֆիզիկոս, միջուկային ֆիզիկայի «հայր» և քիմիայից Նոբելյան մրցանակակիր Է. Ռեզերֆորդը, որի 15 աշակերտները ստացել են Նոբելյան մրցանակ: Հայտնի գիտականներ են Ջ. Մաքսվելը, Մ. Ֆարադեյը, Հ. Կավենդիշը, Ջ. Դալտոնը, Է. Հալլեյը, Չ. Դարվինը, փիլիսոփաներ՝ Ջ. Լոկը, Թ. Մորը, Դ. Ռիկարդոն, Թ. Մալթուսը: Համաշխարհային ճանաչում ունեն գրողներ Ու. Շեքսպիրը, Դ. Դեֆոն, Բ. Շոուն, Ջ. Բայրոնը Չ. Դիքենսը և շատ ուրիշներ: